


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԻՍԲՈՆ
Պապար Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տրեւելի. ողջ դճ. 80
» » կցամատայ » 2
ՕՏ առ երկիրներ տրեւելի Գրան 25
» » կցամատայ » 2
Թղթատարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ԸՆՏԱՆԵԶՈՒՐԿՆԵՐԸ

Պոլսոյ թերթի մը «ուխտաւոր-թղթակի-
ցը» իր նամակներէն մէկուն մէջ սա իմաստով
տեղեկութիւն մը հաղորդած էր — «Գահիրէի
ու Ալեքսանդրիոյ ազգային շրջանակներուն
մէջ խօսակցութեան միակ նիւթը, օրուան
զբաղումը, որքան որդեգրելու հրատապ խն-
դիրն է» ?...

Կերեւայ թէ Փարոսի լրագրութեան
հիւղը դեռ կազմակերպուած չըլլալով, ժա-
մանակին չէինք իմացած Եգիպտական հայե-
րուն այս պատրաստականութիւնը: Առ այժմ,
մեր դիտածը սա է որ, շարաթներ առաջ
Պատրիարքարանի կողմէ այդ նպատակով զըր-
կուած շրջաբերականը կը մնայ Առաջնորդա-
րանի դարակներուն մէջ: Ոչ որ անոր վրայ
նայեցաւ, ո՛չ որ անով զբաղեցաւ:

Երեւակայական լուրերը երբեմն սա միակ
առաւելութիւնը կ'ունենան որ միտքերը կար-
թընցունեն դէպի լաւ: Այս տեսակետով,
ինդակցութեան արժանի է այդ թղթակցու-
թեան հեղինակը որ առիթ կուտայ մեզի կա-
րեկից ուշադրութիւն մը հրաւիրել այդ մեծ
պէտքին վրայ:

Հայաստանի կոտորածները, սուգի ու
աւերման մէջտեղ, թողուցին նաեւ հազար-
ներով որք տղաք, անոք անօգնական, երեսի
վրայ մնացած: Անոնց հայրը մայրը ազգն է:
Միսինարներ շրջապատեցին ու որդեգրեցին
զանոնք որքան որ կրնային: Եւրոպական հա-
յերէն ոմանք լրագրական հրաւերներով, ու-
մանք դրամով, անոնցմէ ընդունել տուին որ-
բանոցներու մէջ: Պոլիս հանգանակութիւն
բացուեցաւ, և օր չանցնիր որ չի կարդանք
սրտաշարժ նամակ մը այս կամ այն գաւա-
ռակէն, գիւղէն, որբերուն նպաստ հասցու-
նող ազգայիններու կողմէ: Տեղ տեղ մաս-
նախումբեր կազմուած են. գաւառային դպ-
րոցներ որբանոցի կը վերածուին, և մինչեւ
իսկ կ'առաջարկուի վանքերն ալ յատկացու-
նել ընտանեզուրկներուն պատապարման ու
դաստիարակութեան: Իրապէս, եղածը դեռ
չ'աւ քիչ է՝ կարօտութիւններուն բազդատ-
մամբ. բայց վերջապէս, կը մտածուի, օգնու-
թեան ձեռք կը կարկառուի:

Ինչո՞ւ Եգիպտոսի հայութիւնը անմասն
մնայ այս ազգային-բարեգործութենէն որուն
ըտանց հետաքրքրութեան օտարներն իսկ ի-

րաւ է որ զաղթականներուն համար կարելին
ու անկարելին եղաւ այստեղ, ու կրկին Յանձ-
նաժողովները դեռ զբաղած են մեկնիլ ու-
ղղներուն դիւրութիւն ընծայելու և մնացող-
ներուն ճարը նայելու. այս աչիւ գործունէ-
ութիւնը, որ ամեն շնորհակալութեան արժանի
է, արդէլ մը չէ սակայն որ որքան մասին
ալ բան մը չի խորհուի:

Այս պարտքը կատարելու զանազան ե-
ղանակներ կան. կարելի է հանգանակութիւն
մը բանալ ու դրամը հասցունել ապահով
ձեռքերու, այդ տարաբաղդ մանուկներուն
յատկացուելու համար. կարելի է քան-երե-
սուն որք ուղել Պատրիարքարանէն՝ Գահիրէի
ու Ալեքսանդրիոյ բարեկեցիկ ընտանիքներուն
ինամոց յանձնելու համար, իբրեւ որդեգիր:
Պաշտպաններ կրնան նաեւ եւրոպական հաս-
տատութիւններու մէջ ընդունիլ տալ զանոնք:

Կանխահաւ է խօսիլ մանդամանութիւն-
ներուն վրայ. նախ սկզբնաւորութիւն մը
պէտք է:

Առաջնորդարանէն կը սպասենք այս նա-
խաձեռնութիւնը:

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Եգիպտոս ալ ունեցաւ իր միքիկը, —
անգլիական բարձր ուղղորհմանութիւն մը
որ հոս կը գործադրուի... անգլիացիներ-
ուն դէմ: Կարծէ հակիրճ տեղեկութիւն մը
սալ հետաքրքրողներուն:

Մուսրաժա Քամելի անունը յաւ յի. աւելի
ծանօթ է «Եգիպտացի հայրենասէր»
սիսդոսով գոր յրագիրները կուսան անոր.
անգլիական գրաւման հակառակորդներուն
պարագրիներէն է. կերպայ, կուգայ, կը
խօսի, կը գրէ. երիտասարդ է տակաւին, ու
գիտէ եւրոպական լեզուներ ալ: Օր մը Պեր-
շին է, յայտոյ շարքուն Բարիզ: Երեջաքի
գիշեր հրապարակախօսութիւն մը կ'ստանգ
Աղեքանդրիոյ Զիզիկիս քաւոնին մէջ, ա-
րարէն լեզուով. ունկնդիրներուն թիւը
հազար կ'անցնի եղեր, ամենքն ալ տեղա-
ցի: Բանախօսութիւնը, որուն նիւթն էր «Ե-
գիպտոսի արդի կացութիւնը եւ եգիպտացի
հայրենասէրներուն պատրաստութիւնը»,
տեւեր է մէկ ու կէս ժամ: Մարիեր շուշ-
ուեր ու ծաղկեպուստներ նուիրուեր են, ճիշդ
իկնպէս պիտի ըլլար եւրոպացի հանդիսա-

կաններու կողմէ՝ օքերայի մը առաջին ե-
րեկոյթին: Դարավերջիկ միքիկը մը որ գո-
ռում գոյում չիկար, ոչ ալ արդարաւոր, ինչ
որ կը պատահի շատ անգամ ամենէն քաղա-
քակիրք երկիրներու ժողովրդի զուա-
րամներուն մէջ:

Բանախօսութեան ողիւն էր՝ եգիպտացի-
ներուն համակրանքն արծարծել դէպ ի Թուր-
քիա, ի նպաստ Գերմանիոյ եւ ընդդէմ Անգ-
լիոյ: Բողոքախառն քանաձեռ մը քուտա-
կուցաւ քրիստոնեական գրաւման դէմ, նե-
ղոսի հոյժին անկախութեան խնդիրը կար-
գադրուած տեսնելու փափագ յայտնող:

Մեզ չի վերաբերիր քննել քե քաղաքա-
կան որ եւ է նշանակութիւն կրնա՞յ ունենայ
այս տեսակ միքիկը մը ու քուտակութիւն մը,
բայց ամեն պարագայի մէջ՝ Պերշինի թեր-
թերը առաջինը պիտի ըլլան զայն ծանու-
ցանող, արդի պարագաներուն մէջ քացա-
ռիկ կարեւորութիւն մը վերագրելով անոր:
Բարիզի թերթերն ալ վար չի պիտի մնան
անշուշտ իրենց գերման պաշտօնակիցներէն.
միջազգային խնդիրներ կան որոնց մէջ Ֆր-
անսա մոռնալ կը կեղծէ Այզա-Լոնէնը:

ԱԹԵՆԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Գ.

ԼՐԱԳԻՐՆԵՐԸ

Գործք Առաքելոցի հեղինակը Աթենացի-
ներուն համար կ'ըսէ. «Ամենքն ալ ուրիշ բա-
նի չէին պարագայեր, բայց միայն նոր բան
զրուցելու կամ լսելու»: Ս. Դուկասի գիտու-
թիւնը ճիշդ է նոյն իսկ այսօրուան համար:
Աթենացին առտուն ելածին պէս կուղէ գիտ-
նալ թէ ի՞նչ է քաղաքականութեան վիճակը,
թէ ի՞նչ նոր քաղաքագործութիւն ըրած է առ-
պատակային խմբակետ Թաքիս՝ Մակեդոն-
իայի մէջ, կամ Բաբա Մալեք՝ Կրէտէի մէջ:
Հետեւաբար շունչը սրճարան մը կ'առնէ առ-
տուան թերթերը աչքէ անցնելու համար: Չեմ
տեսած ժողովուրդ մը որ յոյներուն չափ թերթ
կարդալու կատաղութիւն ունենայ: Ամենէն
պզտիկ քաղաքը իր օրաթերթը ունի: Միայն
Աթէնքի մէջ տասը օրաթերթ կը հրատարակ-
ուի. Արոքոյիս, Թօ Ատի, Էսքիս, Գերի,
Միրիք, Բոյիս, Բալենէնէիսիս, Էմիլիէիս,
Նեա Էմիլիէիս, և Էմպոս որ այս յունուա-

ընէն սկսած է հրատարակուիլ: Արտադրող կարեւորագոյնն է և օրական 14000 օրինակ սպառում ունի, ԹՕ Առդի՝ 11000, Էսթիա և Քէրի 6—7000, իսկ միւսները համեմատաբար անկարեւոր կրնան նկատուիլ, ի բաց առեալ Էմպրոնը որ առաջին օրէն մեծ յաջողութիւն գտաւ, չնորհիւ իր բուռն լեզուին:

Յոյնը ամեն բանէ աւելի կուզէ որ իր թերթը կառավարութեան գէմ կծու յօդուածներ պարունակէ և յուզումնալից լուրեր տայ. ասոր համար բոլոր թերթերը հակա-կառավարական են: Միայն Բրոյիս, պաշտօնաթերթը, ստիպուած է չէզոք մնալ և այդ Բրոյիսն ալ մարդ չի կարգար:

Աթէնք գտնուած միջոցիս թերթերը չորս անգամ Սուլթանին մահը ծանուցին: Լրա-գրախճառ տղաքը որոնք esprit-է զուրկ չեն, ամէն անգամ կը պոռային. — «Վերջին լուրեր, Սուլթանին նոր մահը»:

Յունական թերթերու լուրերուն համեմատ, ամէն չարաթ Ռուսիա հարիւր հազար զօրք կը զրկէ թրքական սահմանագլուխը, հայկական Գոմիթէները տասը հազար հրացան կը մտցնեն Պոլիս, հրոսապետ Թաքիս չորս հարիւր հոգիով ութը հազար զօրք կը պաշարէ Մակեդոնիայի մէջ, Կիյօմ կայսրը մահացու վէրք մը կը հանէ և Եորկիոս թագաւորը անհաւատարիմ կը գտնուի Օրկա թագուհիին: Ընթերցողը անյազութեամբ կը կարդայ այդ լուրերը:

Կը հաւատայ. երբէք:

Սակայն, ինչպէս ըսի, կ'ուզէ որ պղտեսակ լուրեր գտնուին իր թերթին մէջ և խմբագիրները ստիպուած են գոհացնել իրենց ընթերցողներու այդ ճաշակը:

Անցած տարի, յունիսի մէջ, հայ բեռնակիր մը կուգայ Բիրէ և երկու օր հոն մնալէ ետքը, իբրեւ կամաւոր, խմբի մը հետ կը մեկնի դէպ ի Կրետէ: Տեղացի հայերէն երկու հոգի կուգեն այդ եղբուկները հազորդել յունական թերթի մը և շոգեկառք նստելով Աթէնք կերթան: Սակայն հայերը ճամբան կը մտածեն թէ գուցէ մէկ հայ կամաւորի մեկնումը իմաց տալու համար թերթերուն դիմեն ին կրնայ ծաղրի առիթ մը ըլլալ, կամ գոնէ անհարկի նկատուիլ, ուստի կ'որոշեն խմբագրին ըսել որ տասը հոգի էին գացողները. բայց այդ թիւն ալ չափազանց երեւալով իրենց, վերջապէս երեքի կ'իջեցնեն: Ու վախնալով որ պղտիկ հարցաքննութիւն մը անցնելիք կ'ըլլան խմբագրատան մէջ, եւ սուտերնին մէջտեղ կ'ելլէ, նախապէս կ'որոշեն թէ ինչ անուն, Խարիք, Վիճակ, Եւային պիտի տան այդ երեւակայական կամաւորներուն: Այս նախապատրաստութիւններէն ետքը, միշտ երկիւղախառն վարանումով մը կը մըտնեն խմբագրատուն ու կ'իմացնեն երեք կամաւորներու մեկնումը:

Խմբագիրը շատ ուրախ կըլլայ այդ լուրը առնելով. «Միայն թէ, կըսէ, կը ներէ՞ք որ երեքի տեղ երեք հարիւր գրենք, որպէս զի աւելի ուշագրութիւն գրաւէ»:

Ու ահա՛ Աթենայիները կը կարդան թէ երեք հարիւր հայ կամաւորներ Կրետէ գացած են թուրքերու դէմ կռուելու:

Իրիկուն մը Քէրիի խմբագրատան Պ. Բորի հետ կը պատէինք Ամալիա ծառուղին:

յանկարծ լանտօ մը կանցնի քովերէնս. Պ. Բոր կը գոչէ.

— Նախարարապետն է, Պ. Տելիեանի, ուր կերթայ այս ժամանակ:

Կառքը կը կայնի տան մը առջեւ:

— Զարմանալի՛ բան, կը բացագանչէ խմբագիրը, Պ. Տրաքումիսի տան առջեւ կեցաւ: Ի՞նչ բան ունի Տելիեանին ընդդիմադիր կուսակցութեան պետերէն մէկուն տունը: Ահա՛ հետաքրքրաշարժ բան մը վաղուան թերթին համար:

Այս միջոցին կառապանը տան զանգակը կը զարնէ, դուռը կը բացուի, սպասուոր մը կերեւայ որ կառքին քով դալով քանի մը խօսք կը փոխանակէ մէջը Գոմիտիին հետ: Յետոյ կառքը կը պատրաստուի ճամբայ ելլելու:

— Օ՛, օ՛, կը գոչէ նորէն Պ. Բոր, Տրաքումիս չ'ընդունեց նախարարապետը... բայց ասիկա մեծ եղելութիւն մըն է. վաղուան թերթին մէջ պէտք է պատմեմ երկար բարակ: Ի՞նչ բարեբախտութիւն որ հոսկէ անցանք:

Կառքը նորէն մեր առջեւէն կանցնի: Քէրիի խմբագրատան այս անգամ աղէկ մը գլուխը կ'երկնցնէ նախարարապետին դիմագիծները քննելու համար: Յուսահատ ճիչ մը կարճակէ.

— Ան չէ՛ եղբ, Տելիեանիին նմանող մէկն է, բայց ի՞նչ նմանութիւն... մե՛ղք:

Յետոյ, քանի մը քայլ առնելէ ետքը.

— Ահ, քնաս չունի, կաւեցնէ, ես նորէն կը գրեմ իմ գրելիքս, իբր թէ ան ըլլար: Իրա՛ւ ալ հետեւեալ օրը Քէրի կը պատմէր Տելիեանիի խորհրդաւոր այցելութիւնը առ Տրաքումիս:

Յունական թերթերը մեծ արժանիք մը ունին սակայն, և ոչ մէկը ծախուած է ո՛րեւէ կուսակցութեան. խմբակի կամ կառավարութեան, Ասիկա գուցէ զարմանալի, անհաւատալի երեւայ, բայց այսպէս է: Աթէնքի բոլոր օրաթերթները չերմ պաշտպան են հայերուն և մին մանաւանդ, Էսթիա, այնչա՛փ շատ կը զբաղի հայերով և այնչա՛փ նպաստաւոր կը գրէ որ «հայկական թերթ»ը կը կոչեն իր պաշտօնակիցները: Անգամ մը թերթին մէկը կասկած յայտնեց թէ գուցէ ծախուած է հայերուն: Էսթիա դիտել տուաւ թէ Բարիդի մէջ չէին և թէ թերթին անունը Թիկաոօ, Տէսթա կամ Թաւն չէր որ իր գրիչը վաճառէր: Էսթիայի տնօրէնը, որ գրագէտ ու բանաստեղծ է, իր թերթին մէջ ոտանաւոր թարգմանած է Նալպանտեանի «Ազատ Աստուած»ը ու Գամար-Քաթիպայի «Հայերու թուրք»:

ԵՐՈՒՄԱՆԻ ՕՏԵԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ

ԽՆԴԻՐԸ

Ահաւասիկ Կահիրէի ազգ. երկսեռ վարժարանի պատ. Հոգաբարձութեան պաշտօնական նամակը զոր խոստացած էինք հրատարակել:

Յարգելի խմբագրութիւն

«Փարոս» լրագրոյ

Լրագրոյդ Յունիս 5 շաբաթ օրուան թուոյն մէջ, մեր կողմանէ Գալուստեան վարժարանի խումբ մը սիրովեղտ և ժրաջան գաստատուներու եղած զըր-

կանքի մը համար խորին վիշտերնիդ յայտնելով, կը քննադատէք վարժարանի գեղադրութեան և ձայնագրութեան դասատուին յանրաւի հրաժարեցուցուիլը, հայկարանութեան ուսուցչին ամսականին կիսէ աւելի զեղջումն և անոր աստիճանի անկման ենթարկուիլը, և յատկապէս Պօլսէն հրաւիրուած վարժուհւոյ մը երկրորդական նկատուիլը:

Պատասխանելով ձեր խորագրականին, պատիւ ունինք յայտարարել Ձեզ թէ մինչեւ յարզ վարժարանին միջ աւանդուած դասերուն արդիւնքը խիստական եղած է, և թէ հինգ կամ վեց տարիներէ ի վեր հոն յաճախող ուսանողները կարող չեն արարեթէն կամ Փրանսերէն տող մը ուղղադրութիւն և կամ թուաբանութեան մէջ պարզ բաժաւ նուս մը ընելու:

Գալով ձեր խորագրականին ջոշափած երկրորդ և չորրորդ կէտերուն, կը փութանք բանի մը մասնաբաժնութիւններ տալ ձեզ անոնց մասին:

Հոգաբարձութիւնս, մեր կանոնագրոյն ոգւոյն համաձայն բանկցս հաստատապէս որոշում տուած ըլլալով որ թէ՛ իրրեւ ուսուցիչ և թէ՛ իրրեւ կառավարիչ՝ վարժարանի մէջ արդէն պաշտօն ունեցող կամ ունենալ փափագող որ և է անձ պարտի սահմանուած բնութեանց ենթարկուիլ, անգլիերէն եւ Փրանսերէն լեզուայ ինչպէս նաեւ երուպական լեզուայ գեղագրութեան հասարակ բնութեանց քննիչ մը կարողուցու հանրային կրթութեան նախարարութեան կողմանէ, իսկ հայ լեզուի բնութեանց բաժնիւ յանձնուեցաւ Գ. Ե. Յակոբ Ա. Փափաղեան յ. վարդապետի, որ երկու անձեր ընտրեց իրեն աշխատակից. հոս պէտք է յայտնենք թէ քննութիւնը զաղտնի կամ դռնփակ տեղի չէին ունենար. ընդհանրապէս, և ով որ կը փափագէր, կարող էր մասնակցիլ: Արդարեւ կիւրակէ օր մը, եկեղեցին, Պատարագի միջոցին, պատարագամատոյց կը բաժանին կողմէ ծանուցում եղաւ թէ այս ինչ քննութիւնը ամսուն 21 ուրբաթ օրը պիտի կատարուէր, և նոյն տեղեկութիւնը պարունակող աղբ մը դրուեցաւ Եկեղեցւոյ դուռը և հայկական ընթերցասրահին մէջ: Արդ, Փրանսերէնի և հայերէնի քննութեանց տեղի ունեցած օրը, գեղագրութեան և ձայնագրութեան վերոյիշեալ դասատուն, ինչպէս նաեւ հայ լեզուի ուսուցիչը, որուն ամսաթուոյսի գեղջման և աստիճանի անկման ակնարկութիւն եղած է ձեր թերթին մէջ, հրաւիրուելով քննութեանց մասնակցիլ, այս կերպով իրենց միայն հայերէնի քննութիւն տուաւ, իսկ գեղագրութեան դասատուն հայերէն լեզուի գեղագրութեան մէջ միայն քննուիլ խնդրեց, ինչ որ ընդունուեցաւ, և հետեւաբար, երկու տող պարզ գիր և ներկայ անձանց մէկուն անունը գլխագրով գրել տրուեցաւ իրեն: Կերեւի թէ այդ երկու տողերը շատ գէշ գրուած էին գեղագրութեան և ուղղագրութեան կրկին տեսակետով. երբ թուղթը իրմէ առնուելով, դրուեցաւ աթոռի մը վրայ սրահին մէջ, ուր յիսուն կամ վաթսուին չափ աշակերտներ կային, ինչպէս նաեւ քննութեանց մասնակցող բոլոր ուսուցիչներ և քանի մը անձեր, ու հա՛ գեղագրութեան ուսուցիչը որ, յարձակելով իր քննութեան միակ նիւթը եղող այդ թղթին վրայ, առաւ և պատուեց զայն: Ահա այդ արարքին վրայ ուղղուեցաւ իրեն նամակ մը, որուն մէջ կը հաղորդուէր իրեն իւր անպատշաճ ընթացքին ինչպէս նաեւ քննութեանց մասնակցիլ չուզելուն պատճառաւ հոգաբարձութեան իրեն նկատմամբ տուած որոշումը:

Արդ, այդ դասատուին գոյնօրինակ մէկ վարժարանէն յետոյ, հոգաբարձութիւնս անյարմար դատեց իւր պաշտօնին մէջ պահել անձ մը որ այդպիսի օրինակ մը կուտար ուսանողաց, որ իրեն ալ օր մը քննութիւններ պիտի տային, և այս որոշումը տրուեցաւ անոր համար մանաւանդ որ այդ պարունը, իւր քննութեան միակ տարրը ներկայացնող այդ թերթ մը թուղթը ընթերցող, քննութիւն չտուած կը համարուէր այլ եւս:

Իսկ հայերէնի ուսուցիչը, թէպէտեւ, ինչպէս արդէն յիշեցինք, հայերէնի միայն քննութեանց մասնակցելով՝ երկրորդ աստիճան ստացաւ և հաւասար դասուեցաւ ուրիշ ուսուցչի մը որ ներկայացած էր ոչ իրեն պէս, միայն հայ լեզուի, այլ նաեւ Փրանսերէնի քննութեանց մասնակցելու համար, այսու հանդերձ նախընտրուեցաւ հոգաբարձութեանց կողմանէ և վերահաստատուեցաւ հայերէնի ուսուցչի իւր պաշտօնին մէջ, իրեն ընտրութեանը թուղթը սակայն ընդունիլ այս որոշումն կամ մերժել

զայն : Բայց եթէ դժգոհ է իւր առաջին մէկ մասը կորսնցնելուն համար , աւելորդ է , կարծենք , իրեն յեղեցնել նորակալմ հոգաբարձութեան կողմանէ կանոնագրի տրամադրութեան համեմատ տրուած որոշումը , որով կատարուելիք քննութեանց արդիւրին համեմատ գերադասութիւն տրուած է այս կամ այն պաշտօնէի . և սա եղելով ինչ թէ իր մէջ անհրաժեշտ կերպով գերազանց ելած է հայերէնի քննութեանց մէջէն անձ մը , որ նմանապէս ֆրանսերէնի համար առաջին աստիճան ստացած և անգլիէնէն լեզուի համար լաւ քննութիւն մը տուած է և որ , հետեւաբար , հրաւիրուած է վարժարանի պաշտօնէից կարգին մէջ առաջին տեղը բռնելու : Մնաց որ , եթէ հայ լեզուի վերաբերեալ պատուարժան ուսուցիչը իւր աստիճանի անկման համար կը գանգատի , ազատ է , երբ որ կամենայ՝ նորընտիր պաշտօնէին հետ վերստին մրցման մտնել :

Գալով Պոլսէն հրաւիրուած վարժուէտն խընդրոյն , նա չուղեց մասնակցել հայ լեզուի քննութեանց և անբաւական համարուեցան իւր ֆրանսերէնի մէջ տուած քննութիւնները : Մենք փոխանակ իրեն կողմանէ կանոնադրապէս տրուած քննութեան մը ակամատես ըլլալու , կը գարմանաք տեսնելով տասն եւ ինը տարեկան երիտասարդ մը փաստաբանի մը մօտ երրորդական պաշտօնեայ , որ ստորագրութիւններ կը հաւաքէ ի նպաստ յիշեալ վարժուէտն , զոր կը փափագին իւր առաջին պաշտօնին մէջ տեսնել միշտ , թէպէտ մերժած ըլլայ մասնակցել քննութեանց . բայց աստի , կանոնադրապէս քննութիւն տուող օրիորդին գերազանցութիւնը չէ տարակուսելի , ինչպէս որ կը կարծէք ձեր յոգնածին մէջ , որովհետեւ ֆրանսերէնի քննութիւնները կատարող անձին ձեռնհասութեան և սրբիւն տուած մը պայ ինչ խնդիր չի կրնար ըլլալ : Այսու հանգեք , մենք անպատեհութիւն մը չենք տեսներ վերոյիշեալ օրիորդին իւր առաջին պաշտօնը չարուանակելու մէջ , եթէ այն ծնողք որոյ մտքերը գայթակղած են , հաճին իրենց գրողներէն վճարել յիշեալ պաշտօնէին ստացած ամսական 771 դրուշի գումարը , գումար զոր ցարդ չէ ընդունած Պոլսէ եկած որ եւ է վարժուէի :

Ձեր յոգնածին վերջին մասին մէջ կառարկէք թէ վարժարանը բաւականաչափ եկամուտներ ունի առանց հին դաստիարակներու զայլելու նորեր աւելցուել կարենայու համար : Այս ալ կը փութանք պատասխանել թէ , մինչդեռ միայն մէկ ուսուցիչ կար հայերէնի և մէկ ուսուցիչ ֆրանսերէնի համար , հոգաբարձութիւն , ուսանողաց օգտին և յառաջիկաութեանը համար , նորանոր ուսուցիչներ կարգեց լեզուաց ուսուցման համար , և անգլիէնէնի համար ալ , որ զոյգութիւն չունէր առաջ , նորանոր դաստիարակներու պաշտօն յանձնեց , ֆրանսերէնի գեղարուութեան համար ունեցաւ նոր ուսուցիչ , ինչ որ չկար նմանապէս , և արաբերէնի գեղարուութեան ուսուցիչ մը պիտի կոչուի պաշտօնի , ինչ որ չկար բնաւ :

Այսու հոգաբարձութիւն Երկսեռ ուսանողներ միասին դասարան զրկելու անպատեհութիւնն ալ գարմանած պիտի ըլլայ , որովհետեւ , ինչպէս կը տեսնուի՝ գրեթէ իւրաքանչիւր ճիւղի համար մէկէ աւելի ուսուցիչ պիտի ունենայ իւր տրամադրութեան ներքեւ :

Ապրիլ 17 Ընդհանուր Ժողովի կողմանէ ընդունուած երկուսուցիչին համաձայն , վարժարանի պաշտօնէից վճարուած ամսաթոշակը տարեկան 49,507 դրուշի գումարի մը կը հասնէին , մինչդեռ այժմեան պաշտօնէիները պիտի ստանայ տարին 56,340 դրուշ , ուրեմն հոգաբարձութիւնը ելմտացուցին վրայ բան մը չէ պակսեցուցած . ընդհակառակը . և կը կարծէ թէ իր ըրածը լաւագոյն բանն է զոր կրնար ընել . հետաւաբար իւր ամսաթոշակէն գոհ չեղող պաշտօնէի կրնայ իւր տեղը ուրիշի մը թողուլ :

Կը խնդրենք , որ բարերաճիք այս տողերը հիւրընկալել ձեր թերթին մէջ ի շինութիւն գայթակղեալ մտքերու :

ԵՌԻՍՈՒՅ ԱՋԻՋ
ԵՋՆԻԿ ՔՇՆՑ ՊԱՆՈՒՆԻ
ՏԻԳՐԱՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ
Գահիրէ , 10 յունիս 1897

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ , մասնագէտ կանանց , սսամոսի , մորթի եւ ջղային հիւանդութեանց : Կ'ընդունի իրեն դիմող հիւանդները Մեզոն Զահար , Շեքիբ Զօքիի նիւր դէմը . ամեն օր առաւօտեան ժամը 10-ին 11 եւ կես օրէն վերջ 2-ին 4: Բոլոր վկայեալ աղբաճի կը դարձանուին :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն մեզ կը հաղորդեն թէ Օրմանեան Պատրիարքին դիմումներուն վրայ , կայսերական իրաւոյ մը հրամայած է Կիլիկիայէն արտաքսել Յովհաննէս Գաղանճեան ինքնընտիր կաթողիկոսը :

Յիշեալը թուէս 10 օր առաջ Պէրութ ուղեւորեր է :

Կ. Պոլսէն կը հեռագրեն Տէյրի Նիւզին . «Հայաստանի վիճակը նորէն ուշագրուութիւն կը գրաւէ : Պատրիարքը մտադրութիւն յայտնել է հրաժարելու , եթէ իր առաջարկութիւնները՝ Ժողովուրդի վիճակի բարւոքման համար՝ չընդունուին : Զրոյց կը չըլի թէ նոր անկարգութիւններ ծագեր են Սեբաստիոյ մէջ » :

ԹՈՒՐԲԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Հայտնութեան պայմաններու մասին սկըսուած բանակցութիւններուն վրայ հասած հեռագրական լուրերը հակասական են : Մէկ կողմէ , Ռիւդէր կը հաղորդէ Տէյրի Նիւզի Կ. Պոլսոյ թղթակցին սա տեղեկութիւնը «Թէվֆիդ փաշա յայտարարեց գեապաններուն թէ իսլամական կրօնքին հակառակ է՝ արեան գընով առնուած գետին մը ետ տալ . Գերմանիոյ գեապանը ուժ կուտայ Թէվֆիդ փաշայի այս յայտարարութեան » , միւս կողմէ , Համլաս կը հաղորդէ թէ «Սուլթանը աւելի հաշտարար կ'երեւայ Թեսաղիոյ մասին : Ընդհանուր համոզումն այն է որ տեղի պիտի տայ , օտար տէրութիւններէն ոմանց խորհուրդին վրայ » : Երէկ գիշեր առնուած Ռիւդէրի նոր հեռագիր մը այս վերջին տեղեկութիւնն հաստատել կը թուի , աւասիկ այդ հեռագիրը . «Կ. Պոլիս , 11 յունիս : Կը հաւաստեն թէ Թուրքիա ետ կ'եցած է՝ Թեսաղիոյ օսմ : հողին «կցելու իր պահանջումն . Բէնէյիս գետաակին հիւսիսակողմը գտնուած գաւառակ մը «միայն պահել կ'ուզէ . նոյնպէս պիտի բարեփոխէ իր միւս պահանջումները » :

Ձի մոռնանք աւելցնելու թէ Բեդրասպուրկի և Աթէնքի աղբուրեաց յարաբերութիւնները որոնք պատերազմի սկիզբէն ի վեր ձգտուած կը մնային , վերահաստատուած են՝ Երկսեռ թագաւորին մէկ նամակին վրայ ուրով երախտագիտութիւն կը յայտնէր Զարին՝ իր բարեացակամ միջամտութեանը համար , ի նպաստ զինադադարի և կը խնդրէր հաշտութիւնը կնքել տալ այնպիսի պայմաններով որոնք Յունաստանի կարողութենէն վեր զոհողութիւններու չենթարկեն այդ երկիրը : Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան կէս-պաշտօնական թերթն ալ , Նոն , իր լեզուն փոխած կ'երեւի Թուրքիոյ նկատմամբ :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Եգիպտոսի առողջապահական վարչութիւններն արտասովոր գործունէութեան մը հարկին մէջ կը գտնուին և իրաւամբ . ճիւտէի մէջ ժանտախտ ծագած է : Մինչեւ երէկ իրիկուն առնուած լուրերուն նայելով , տաս-

նըմէկ հոգի բռնուած էին , որոնց վեցը մեռած են : Աղեքսանդրիոյ առողջապահական խորհուրդը իր երէկուան նիստին մէջ որոշեց տանըհինգ օրուան քարանթինայի ենթարկել ուխտաւորներն՝ Էլ-Թօրի մաքրանոցին մէջ . այն նաւերը որոնք ուխտաւոր չունենան , սասն օրուան քարանթինա միայն պիտի կրեն թէ՛ նաւերը և թէ՛ ուղեւորները պիտի ապանեխուին : Խորհուրդին նախագահը , Տըրթ . Ռիւֆֆէր , ծանոց միանգամայն թէ խնդրած է կառավարութենէն որ քանի մը նաւեր զրկուին կարմիր ծովու մէջ հսկողութիւն ընելու :

Սիւէզի ջրանցքին երկայնութեամբ ալ պահապաններուն թիւը պիտի աւելցուի , որպէսզի գաղտագողի ցամաք ելլողներ չի գըտնուին : Եգիպտացի ուխտաւորները , Էլ-Թօրի մաքրանոցին մէջ քարանթինա սպասելէ ետք , երկրորդ քարանթինայի մը պիտի ենթարկուին ի Բազ-Ապու-Սիւիմա :

—Սիւէզի ջրանցքին բաժնեւէտըց ընդհանուր Ժողովն յունիս 9-ին գումարուելով ի Բաւրիլ՝ որոշեց է Ֆէրտինան տը Լէսերսի նըւիրեալ հոյակապ յիշատակարան մը կանգնել տալ ջրանցքին բերանը , ի Բօռ-Սայիտ , երկու հարիւր հազար ֆրանք ծախքով :

—Հանրօգուտ շինութեանց նախարար Ֆախրի փաշա երէկ Հաղաս ուղեւորեցաւ ուր երկու շաբաթի չափ պիտի մնայ օգնափոխութեան համար :

—Բռէնա Հայիմ փաշային Կ. Պոլիս երթալուն առթիւ զրոյց մը եղած է թէ , կ'ըսէ Էմիրքըն Կազէթ , այս ուղեւորութեան նպատակն է Խտիվական գերդաստանի իշխաններէն մէկը կրէտէի կուսակալ անուանել տալ :

—Գահիրէի պատժական տունները մէկ ամիս բանտարկութեան ու 101 դրուշ տուգանքի դատապարտեց մէտրէսէի ուսանող Իպրահիմ Տապապըր որ անցեալները Խտիվական Օւէրային մէջ տրուած ներկայացման մը պահուն հակաքրիստոնէական ճառ մը արտասանած էր բեմին վրայէն :

ԳՐԶԻ ՔՍԱՅԱՃՈՅԸ

ՕՍԻՐԻՍ ԱՌ ՌԱՄՍԷՍ

Երէկուրէն այսօր , բանըջորս ժամուան մէջ , բառաւոր հինգ տարիէ ի վեր , միտքս չարչարող , սիրտս մաշեցնող իտալական վերջապէս կիրականանայ : Եթէ ներքոյ երկրին եմ , Ռամսէս :

Ռամսէս եմ գաղտնի փախչող աշակերտի մը պէս , առաջին անգամ երկայն Ֆիսասն հագնող աղջկան մը նման , վերջապէս ուրախ եմ ինչպէս ուրախ կըլլան այն տեսակ մը կիները որոնց հրկը հինգ տարուան համար Հնդկաստան կերթայ :

Ասկից երեք տարի տալէ երբ կրնա բարեհաճեցաւ . . . մեռել (ամուսնական կեանքիս սրբան դառն եղած ըլլալը դու գիտես) , ուղեցի նոր գերեզմանաւ տան մէջ թաղել տալ նոր բաները միշտ հաճոյք կը պատճառեն կանանց և այդ հաճոյքին զրկել չուզեցի ան որ քան տարի շարունակ կէս եղած է :

Արդ , երեք տարիէ ի վեր հոն հանգիստ կերպով կը քնանայ , ինչ որ սովորութեանը մէջ չէր :

Երէկ շրջաբերականով մը հինգ հարիւր դուրուշ ուղղուեցաւ ինէ , այդ հողին համար :

Ձեռ գիտեր , սիրելիս , ինչ փութկոտութեամբ վազեցի պարտքս վճարել իրենց պահանջը օրինաւոր գտայ , սիրեցի այդ կանոնադրութիւնը և օրհնեցի զայն շինողներու անունը՝ որովհետեւ . . . շնորհիւ այդ կանոնադրութեան այս օր հոգատեղ եմ . . . : Քառսուն տարի ապրելով չի կրցած ձեռք անցուցածս կրնա ընծայած է . . . մեռնելով : Եւ ըսողներ կան որ կիները անօգուտ կ'ունենան , ապու չե՞րը :

ՕՍԻՐԻՍ

Le Gérant: HENRY SAKAKINI

Յ. ԵՒ Կ. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԷԹԻ
ՍԵՇԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ԸՆԳՆԱՆՈՒՐ ՄՔԵՐԱՆՈՅ «ՇԱՐԱ ԱՂԱՅԱՔ»
ԽԱՌՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՊԵՐՏ:

ԸՆԹԱՑԻԿ ԴԻՆ ՍԻԿԱՌԷԹՆԵՐՈՒ

Սիկարէթ	Ռուսեալ	1000 հաար	2 1/2 Անգ. ոսկի
"	Խըալիկալ	"	2 " "
"	Պալատական	"	1 1/2 " "
"	Պօհճա	"	1 1/4 " "
"	Նաթիւրէլ	"	1 " "
"	Փօռ	"	20 ֆրանկ

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, ՈՅԺ, ԿՈՐՈՎ

ԴԱՐՄԱՆ ԱՆԱՐԻՒՆՈՒԹԵԱՆ, ՏԿԱՐՈՒԹԵԱՆ,
ԵՒ ՋՂԱՅԻՆ ՇԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ԼԸ ՊԻՕԺԵՆ

Միակ սնունդ նորաբոյժ հիւանդներու համար,
կազմուիչ արփ, շնչառական գործարաններու, ար-
եան եւ ջրային հիւանդութիւններու:

Կը յանձնարարուի հեծելանիւ գործածողներուն:
Սփանջելի դեղ ոյժի պէտք ունեցողներուն համար:

ԿԸ ԴՏՆՈՒԻ ԱՄԵՆ ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ ԲԷՋ

Մքերանոց. — Ա. ՄԱՆՏՈՅԻԱԻ ԱՆԿՅՈՒՆ
ԵԳԻՊՏԱԿԱՆ ՂԵՂԱՐԱՆՆԵՐ ԷԶՅԵՖԻԵ, ԴԱՆԻՐԵ:

ՀԱՄՄԱՄ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՂՆԻՔ
ՀԱՆԻՍ ՓԱՇԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ, ՍԲԼԱՆՏԻՏ ՊԱՌԻ ԵՏԻՆ

ԲԱՂՆԻՔ, ՋՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ,
ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

ԲԱՂՆԻՔԸ ԲԱՅ Է

Էրկ մարդոց համար առաւօտեան ժամը 7էն 10
եւ իրիկունը, կէս օրէն սկսեալ մինչեւ 8:
Կանանց համար առաւօտեան ժամը 10էն մինչեւ
կէս օր:

Պարար եւ կիրակի օրերը միմիայն էրկ մարդոց համար
կիրակի եւ տոն օրերը ՀԱՄՄԱՄԸ կէս օրէն վերջ
գոյ է:

ՀՐԱՆՏ ԱՋԱՏԵԱՆ

ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Հայ եկեղեցւոյ գէմ բացած խանութին
մէջ ամենէն զթուարահաճները գոհացնելու
եղանակաւ կ'արդուկէ շապիկներ եւ այլն սո-
վորական գիններով:

Ուզողներու համար լուացարարութեան
հիւղ մ'ալ աւելցուած է, ուր՝ յաճախող-
ներուն ճերմակեղէնները զատ զատ լուարու
գնահատելի գրութիւնը հաստատած է:

Ի դիւրութիւն յաճախողաց ճերմակե-
ղէնները՝ ինք անձամբ պիտի առնէ տուներէն
եւ պիտի վերադարձնէ:

Տ Պ Ա Ր Ա Ն
ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ

ԱՄԵՆ ԼԵՋՈՒԷ ԶՐԶԱԲԵՐԱԿԱՆ
ՄԱՀԱՋԴ, ՀՐԱԽԻՐԱԳԻՐ, ԱՅՑԱՔԱՐՏ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳՆՈՒԽ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եգիպտոսի օր եւ է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնա-
մօք եւ փութով կը կատարուին:

Վայրկենական սպազորութիւն այցեֆարսերու եւ տոմսերու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տոն օրերէ առաւօտեան ժամը 7էն մինչեւ երեկոյեան 7:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵԻՆԻՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		խառն	օմ նիւյ.	կէս ուղ.	օմ նիւյ.	էքսորէս	օմ նիւյ.	էքսորէս	օմ նիւյիւս	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1 2 3 կարգ	կարգ
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	էքսորէս 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		օմ նիւյ.	կէս ուղ.	օմ նիւյ.	էքսորէս	խառն	օմ նիւյ.	էքսորէս	օմ նիւյիւս	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1 2 կգ.	առաւ.	1,2,3 կգ.	1 2 կգ.	1 2 3 կարգ	կարգ
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	էքսորէս 12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՅ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՅ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէշ (քարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		»	1 20	
Ջակադիկ	ժամ.	1 34	8 54	Ջակադիկ	ժամ.	3 7	8 53
	մեկ.	1 44	9 4		մեկ.	3 17	9 3
Իսմաիլիա	մեկ.	3 40	1 —	Պէնհա	ժամ.	4 13	9 47
Սիւէշ կայարան	ժամ.	—	5 —		մեկ.	4 17	9 4
Տօք (քարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35